

ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱՍԽԱՆՏՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼՈՒՅ ԱՆՄԻՋԱՊԵՍ ՀԵՏՈ
ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎՈՂ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2849/2022/ԿՈՒՎ4/Ա

ք. Երևան

09/06/2022թ.

1. Ֆ/Ա ԽՈՒԴԵԴԱՆ ՍԼՈՅԻ ՄԱՄՈՅԱՆ

(հարկային իրավախախտում կատարած անձի անունը, ազգանունը, կազմակերպության լրիվ անվանումը, ՀՎՀՀ (առկայության դեպքում))

2. ԱՐԱԳԱԾՈՏՆ ՇԱՄԻՐԱՍ 1 Փ. 4 ՆՐԲ., 8, Տ

(բնակության (գտնվելու վայրի) հասցեն)

3. 54721547

(ֆիզիկական անձի ՀՕԸ, ՀՎՀՀ)

4. Հարկային իրավախախտումների նկարագրությունը, ժամանակահատվածը, ձեռքբերված տեղեկությունները և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն պահպանվել

ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից ստացված շարժական գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տեղեկությունների համաձայն՝ ֆիզիկական անձի կողմից.

1) 25/05/2021 թվականին օտարվել է 27/03/2015 թվականին ձեռք բերված GAZ 311000 մակնիշի 1998 թվականի արտադրության 100 ձիաուժ հզորությամբ տրանսպորտային միջոցը «ՍՌԱՍԴՕ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01246478), որի պայմանագրային արժեքը կազմել է 110,000 ՀՀ դրամ:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրքը) 29-րդ հոդվածի՝ հարկային գործակալը հարկ վճարողներին եկամուտներ վճարող (հատկացնող կամ բնամթերային ձևով տրամադրող)՝ Օրենսգրքի 58-րդ գլխով սահմանված կարգով հարկային մարմնում որպես հարկ վճարող հաշվառված կազմակերպությունն է, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը, որի վրա, Օրենսգրքի համաձայն, դրված է հարկ վճարողներին եկամուտներ վճարելիս (հատկացնելիս կամ բնամթերային ձևով տրամադրելիս) նրանց եկամուտներից հարկերը կամ վճարները հաշվարկելու, պահելու (զանձելու) և ՀՀ պետական բյուջե վճարելու պարտավորությունը:

Հաշվի առնելով այն, որ «ՍՌԱՍԴՕ» ՍՊ ընկերությունը չի հանդիսանում հարկային գործակալ՝ ֆիզիկական անձի մոտ վերը նշված օտարման գործարքի մասով առաջանում է եկամտային հարկ հաշվարկելու և ՀՀ պետական բյուջե վճարելու պարտավորություն:

Օրենսգրքի 150-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նշված գործարքից հաշվարկվում է եկամտային հարկ 22 տոկոս դրույքաչափով (մինչև 05.05.2022 թվականը գործող խմբագրության համաձայն):

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ ֆիզիկական անձի կողմից վերը նշված հարկվող գործարքի մասով, հարկային մարմին չի ներկայացվել 2021 թվականի եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկ և չի վճարվել արդյունքում առաջացող հարկային պարտավորությունը:

5. Ձեռքբերված տեղեկությունների սահմաններում պարտավորության նախնական հաշվարկը և պատասխանատվության կիրառման իրավական հիմքերը

Ֆիզիկական անձի կողմից 2021 թվականի եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկ չներկայացնելու պայմաններում հարկային պարտավորությունների հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ.

Օրենսգրքի 150-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եկամտային հարկի հաշվարկման համար հիմք է ընդունվել պայմանագրային արժեքի 22 տոկոսը, որը կազմում է՝ 24,200 դրամ (110,000 դրամ*22%):

Օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով, որը կազմում է՝ 484 դրամ (09/06/2022 թվականի դրությամբ) [24,200x0,04%x50]:

Այսպիսով, ֆիզիկական անձի կողմից չկատարած հարկային պարտավորությունների գումարը 09/06/2022 թվականի դրությամբ կազմում է 24,684 դրամ, որից հարկ՝ 24,200 դրամ, տույժ՝ 484 դրամ:

Հարկային պարտավորությունները հաշվարկվել են 09/06/2022 թվականի դրությամբ և ենթակա են վերահաշվարկման լրացուցիչ նյութերի ու փաստարկների առկայության և ներկայացման դեպքում:

ՀՀ ՊԵԿ ՀՏՌՎ վարչության ԿՈՒՎ թիվ 4 բաժնի գլխավոր հ/տ

Աննա Շահբազյան

Հեռ.՝ 010 304055 ներքին 4048